ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-8-5-Ա

ք. Երևան 13.10.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում քննարկեց 2025 թվականի մարտի 12-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «LUCIANO SOPRANI S.r.l.» ընկերության (Via Morosini, 30 I-20135 MILANO, IT) «SOLO SOPRANI» (IR1044521) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 09-րդ և 25-րդ դասերի ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող՝ 09-րդ դասի նույնատիպ ապրանքների համար «SOLO» (JSC “Bank of Georgia”, 29a, Gagarin Street 0160 Tbilisi (GE)) (IR 1484647) և 25-րդ դասի նույնատիպ ապրանքների համար «Sopranos» (Home Box Office, Inc, 30 Hudson Yards New York NY 10001 (US), (IR 1148161) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 122- րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող նիշերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նիշերի

մաս կազմող «SOLO» բառային տարրով և նիշերի համընկնող մասերի բնույթով՝ SOPRANI և SOPRANOS:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող՝ 09-րդ դասի նույնատիպ ապրանքների համար «SOLO» (JSC “Bank of Georgia”, 29a, Gagarin Street 0160 Tbilisi (GE)) (IR 1484647) և 25-րդ դասի նույնատիպ ապրանքների համար «Sopranos» (Home Box Office, Inc, 30 Hudson Yards New York NY 10001 (US), (IR 1148161) համակցված ապրանքային նշաններին: Բողոքարկման խորհրդի անդամներից մեկը առաջարկեց հայտարկվող ապրանքային նշանի ապրանքների ցանկը կրճատել, որպեսզի հայտարկվող և հակադրվող ապրանքային նշանների ապրանքների ցանկերը նույնական ապրանքներ չունենան, ինչը հնարավոր կդարձնի հայտարկվող ապրանքային նշանի գրանցումը:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն էր ապրանքների ցանկի կրճատման առաջարկի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 45-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «LUCIANO SOPRANI S.r.l.» ընկերության «SOLO SOPRANI» (IR1044521) ապրանքային

նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքի քննարկումը հետաձգել, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ